ԿԱՐԵՆ ՂԱՐՍԼՅԱՆ

ԳՐՈՂԻ ԾՈՅԸ

Տգեղ հավարեներ

լրամշակված էլեկտրոնային տարբերակ

ինքնագիր մատենաշար

ԿԱՐԵՆ ՂԱՐՍԼՅԱՆ

ԳՐՈՂԻ ԾՈՅԸ

ՏՁԵՎ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Երևան
Ինքնագիր գրական ակումբ, 2010
(Լրամշակված էլեկտրոնային տարբերակը՝ 2023)

ՀՏԴ 891.981-1 Ղարսլյան
ԳՄԴ 84 Հ-5
Ղ 477

Շապիկի ձևավորումը՝ Կարեն Ղարսլյանի

ISBN 978-99941-2-385-8
© Ինքնագիր գրական ակումբ 2010 թ.
© Կարեն Ղարսլյան, 2010, 2024 թ.

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Այն բացառիկ դեպքերից է, որ գրականությունը մեջս կիրք է հարուցում [...] Սեքսուալ էներգիա է, որ ոչ թե ուղղակի արտահայտվում, այլ փոխակերպվում է արվեստի գործի: Երեւակայությամբ այդ պատկերները, որ ստեղծում է, մարմնական սիրո վայելքը, խինդը, շատ ազատագրող է:

Վիոլետ Գրիգորյան
բանաստեղծ

Այստեղ հարցն էրոտիկը չի, այլ այն, որ նրա բանաստեղծությունն ամբողջովին ազատվում ա աբստրակտ, անորոշ համարվելուց: Էն, ինչ Կարենը ներկայացնում ա, քո կողքին ա, սերն էլ ա քո կողքին: [...] Մի բան էլ. բանաստեղծությունները սովորաբար տխուր են լինում (իմ բանաստեղծություններն էլ, օրինակ), բայց Կարենի պոեզիան հրճվանքի բանաստեղծություն ա ամբողջովին:

Մարինե Պետրոսյան
բանաստեղծ

Էսօր էնքան շատ գրականություն ա տպվում, ու էնքան շատ գրողներ կան, որոնք իրարից առանձնապես ոչնչով չեն տարբերվում, և այդ ամբողջի ֆոնի վրա Կարենի գրականությունն առանձնանում է:

Վահան Իշխանյան
Արձակագիր, լրագրող

Տողերը կը հոսին մեր ժամանակին պէս երբեմն թեթեւ, երբեմն խորունկ, երբեմն գռիհային, երբեմն Զահրատի թիւերուն նման փիլիսոփայական, միշտ սրամիտ՝ չընդունուածը, չքողազերծելին եւ չխօսուածը (չ)հայերէնի մէջ բերած, բանաստեղծութիւնն ու անոր փափաքը վերածած մտասեւեռման: Եւ դեռ երբեմն techno կշռոյթ թէ կանուխ MTV-ն յիշեցնող խելացնոր յորձանուտ մը պատկերներու եւ զգայութեանց: Եւ, անշուշտ, խոստում մը, որ անզուսպ ըլլալու մտադրութիւնը ունի:

Յակոբ Կիւլլիւճեան
UCLA-ում արեւմտահայերենի դասախոս

ՑԱՆԿ

ՏՁԵՎ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Ինտիմ շատ _ 6
Ես _ 7
Ինքը _ 8
Ասա աչքերիս _ 9
Քեզնաբավարար լինելը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 10
Իմ աղոթքը _ 11
Երկգլխանի Հռոմի պապը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 12
Սիրունիկ _ 13
Միլիարդատեր բանաստեղծը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 14
Թաց կարմիր հիերոգլիֆներ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 15
Աէրոդինամիկ օրգազմ _ 16
(չ)Շարունակելի _ 17
Դու պլյուս իմ պուլս _ 19
Միայնակություն _ 21
Գիշերային ակումբ _ 22
Give Peace a Fuck _ 25
Ռազմագերիների ռազմագերիները _ _ _ _ _ _ _ _ _ 26
Ես այլասերվածի մեկն եմ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 27
Պոեզիա եմ ուզում _ 28
Երանելի աշխատանք _ 29
Մարտյան մատներ _ 31
Ամերիկանիզմներ _ 32
Այլևս _ 34
Ես սիրում եմ քեզ ըստ Google-ի _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 35
Տեր ես _ 36
Կնոջ կլիշե _ 37

ԱԺԴԱՀԱ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Նացիստ _ 41
Պոետի Կարդիոգրամման _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 48
Սեր ամեն հայացքից _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 53
House Sweet House _ 59
Տիեզերք _ 65

ՏՀԱՅՐՇՆԵՐ

Հ

Ինտիմ շատ

Ես էի
Ինքն էր
Երրորդն ավելորդ էր

Աստված ջոկեց
Աստված չքվեց
Անցանք գործի

2002

Ես

Երբ որ բերանս մոտ գնաց ականջին
Մեջը բան էր ասելու
Ու քիփ մոտեցավ որ ասի
Էլ չասեց բան չասեց
Ճմռթվեց ականջի ձև ընդունեց
Անցնելով հազար ու մի յուրահատուկ ականջի ձև չորս վայրկյանում
Մի փոքր բացվեց փակվեց
Լեզվովս թրջվեց
Վերևի ատամներովս կծվեց
Մոտեցավ բլթակին
Ու ոնց որ կոպերն են աչքերը լզում
Շուրթերովս բռնեցի ականջը
Ու սղալով իջա հասա բլթակին
Շուրթերովս կախվեցի բլթակից
Ու կաթիլի պես ընկան բլթակից շուրթերս

2002

Ինքը

Ինքը ինձ չի հարցրել
Ուզում եմ թե չէ
Ես եմ հարցրել ու ինքը ասել ա
«Հա ուզում ես» ու արել ա
Կյանքում չեմ մոռանա
Որ վերջացնում էր մեջս
Ոնց որ մեջս անձրև գար
Հորդառատ անձրև էր
Մարմնով ընկել էր վրես ու կայծակի պես գոռում էր
Անձրևը կտրվեց
Կայծակը կորավ
Ես պրծա

2002

Ասա աչքերիս

Ասա աչքերիս
- Ասա աչքերս ինչի՞ են նման
Աչքերդ 8560 հատ հունիսի են նման
Աչքերդ նման են 8560 մեգաֆոնից աղաղակված լռության
Աչքերդ երկու բուռ ջրի են նման
Աչքերդ երկու սև նարնջով նատյուրմորտի են նման
Աչքերդ օձ բռնելու համար նախատեսված երկպոզանի ձողի են նման
Աչքերդ նման են սև ներկած եղունգների
Երբ որ թարթում ես
Աչքերդ նման են դիսկոտեկների թրթռացող լույսերին
Աչքերդ իմ սիրած կինոթատրոնն են
Մանավանդ երբ դիմացը կապիկություններ եմ անում
Ու աչքերիդ խորքում տեսնում իմ աչքերի արտացոլքը
Որոնցում արտացոլված են քո պատասխան կապիկությունները
Երբ որ ծիծաղում ես
Աչքերդ նմանվում են Դոն Կիխոտին հիմարացրած հողմաղացին
Երբ որ ծիծաղում ես
Աչքերդ գմփգմփացող օձառի պղպջակների են նման
Երբ որ աչքերով ֆլիրտ ես անում
Աչքերդ նմանվում են կիսատ իջեցրած տրուսիկի
Երբ որ լացում ես
Աչքերդ նման են Հիսուսի երկու ծակ ձեռքերին
Երբ որ լացում ես
Աչքերդ նման են փշրված ջերմաչափից հոսող սնդիկի
Երբ որ լացում ես
Աչքերդ ջարդված ակվարիումի ծակից հոսող ոսկե ձկնիկների են նման
Երբ աչքերդ ես սրբում
Էդ ոսկե ձկնիկներն ինչ ցանկություն ասես
Որ չեն կատարում

2005

Քեզնաբավարար լինելը

Հայելի ուզեմ
Աչքերդ տուր
Խոսել ուզեմ
Ականջդ տուր
Երաժշտություն ուզեմ
Կոկորդդ տուր
Ծամոն ուզեմ
Պռոշներդ տուր
Լվացվել ուզեմ
Լեզուդ տուր
Ծարավ լինեմ
Թուքդ տուր
Սոված լինեմ
Արգանդդ տուր
Լցնեմ
Երեխա բերես
Պտուկներիցդ կաթ ծծեմ
Աղ ուզեմ
Հեշտոցդ տուր
Սիգարետ ուզեմ
Մատներդ տուր
Բաժակ ուզեմ
Պորտդ տուր
Հենվել ուզեմ
Ուսդ տուր
Բարձ ուզեմ
Տուտուզիդ կլոր թշերը տուր
Վերմակ ուզեմ
Մազերդ փռի

2005

Իմ աղոթքը

Կյանքում մի անգամ եմ աղոթել ուտելուց առաջ
Ամպամած առավոտ էր
Աչքերիս պարկիկները ուռած էին անքնությունից
Քաղցրեղենս էլ նոր էր արթնացել
Ու խոհանոցում երգելով նախաճաշ էր պատրաստում
Որ տեսա
Խելքս թռցրի
Հետևից ծնկաչոք մոտեցա
Թատրոնի վարագույրների պես
Բարձրացրի գիշերանոցը մինչև գոտկատեղը
Նման ներկայացում տեսած չկամ
Շշմելու չափ ուռուցիկ հետույքը չէր թողնում
Որ փեշերը ցած սահեին
Գիշերանոցի տակ հագին բան չկար
Տուտուզի թշերը բաժանող ուղղահայաց գծիկը հասնում էր
Մինչև բոբիկ ոտնաթաթերը
Այդ երկար գիծն էլ հատվում էր վերևում
Թշերն ազդրերից բաժանող
Հորիզոնական գծիկներով
Ու ես այդ գոգավոր խաչի դիմաց
Աշխարհի ամենաանկեղծ աղոթքն էի մրթմրթում ծնկաչոք
Ու շնչակտուր համբուրում սնամեջ խաչն աղոթքիս ամեն տառից հետո
Ու երբ համբերությունս կորցրած
Ինքս ինձ խաչեցի շնչավոր խաչին
Ու խրվող մեխի հարվածներից
Խեղճի ձեռքերից նախաճաշը թափվեց լվացարանի մեջ
Ու ափսեները փշրվեցին
Ես շռայլորեն թողություն տվի
Բոլոր մարդկանց բոլոր մեղքերին
Ամեն

2005

Երկգլխանի Հռոմի պապը

Լիֆի մեջ
Ծիծդ ոնց որ Հռոմի պապի գլուխը լինի
Հանի շպրտի անտեր թասակները
Բերանիցս լավ լիֆ չես գտնի

2005

Սիրունիկ

կ
իկ
Նիկ
ւնիկ
ունիկ
ռունիկ
իռունիկ
սիռունիկս
իռունիկ
ռունիկ
ունիկ
ւնիկ
Նիկ
իկ
Կ

2009

Միլիարդատեր պոետը

Շունչդ ներս քաշեցիր
Կուրծքդ կպավ ձեռքիս ափին
Արտաշնչեցիր
Ձեռքս մնաց օդի մեջ

Մարմինդ հպման հզոր հաճույքից փշաքաղվեց
Ու ես դարձա քո երազած միլիարդատերը
Ոչ մի գանձի հետ չեմ փոխանակի
Դիզածս միլիարդավոր փշիկները

2005

Թաց կարմիր հիերոգլիֆներ

Առաջին կուրսի ուսանողուհի
Նրան աշխարհն առանց ջանքերի է զարմացնում
լիքը կնճիռներ ունի
մանր-մունր հիերոգլիֆիկներ
թմբլիկ պռոշների մակերեսին

Երկու շուրթերը մեջտեղներից երկու մատով իրար եմ սեղմում
Ու բաց թողնում այդ անվերջության նշանն իմ բերանի սև խոռոչում

2004

Աէրոդինամիկ օրգազմ

Մենք կթռնենք կփախնենք ստեղից
Եթե լիսեռիս պտտող մոմենտը
Փոխակերպես քարշուժի
Հագնելով առնանդամիս
Ու պրոպելլերի արագությամբ առանցքիս
Շուրջը ոտ ու ձեռ պարզած պտտվելով
Ստեղծես աերոդինամիկ ուժ
Մենք կթռնենք կփախնենք ստեղից
Եթե էս գիժ ուղղաթիռդ չթափի մի ակնթարթից

2003

(չ)Շարունակելի

Աղջկաս աչքերը կիսափակ են
Մազերը գզգզված

Սևամորթի երկար մատներ
Կաթնագույն ազդրերին
Կատվային ալարկոտություն
Մեծ արևոտ սենյակ
Մատներիս սև ստվերներն են
Փռվել աղջկաս ազդրերին

Ես ու կյանքս էլ
Փափուկ թախտին

Մատներիս հստակ ուրվագծված ստվերներով
Դանդաղ
Շոյում եմ նրա բդերը

Մի մատիս ստվերը
Սահեցնում եմ կոնքից մինչև ծունկը
Դանդաղ հետ եմ բերում

Մի մատ էլ եմ ավելացնում
Ստվերները սուզվում են դեպի բդերի ներսի մասերը
Փափուկ ու նուրբ
Սիրածս մասերն են
Մի մատի ստվեր էլ եմ ավելացնում
Անշտապ շոյում եմ
Հինգ մատներիս երկար ստվերներով

Սիրածս մի բան զգաց
Տեսնում եմ թե ինչպես են ոտքերը փշաքաղվում
Կիսաբաց կոպերի միջով աչքերը հետևում են
Մատներիցս մեկի ստվերին
Որը տրորում է իր հետզհետե թրջվող արանքը
Ոտքերը սկսեց իրար քսել
Ու ծունկը մի փոքր բարձրացրեց

Ձեռքս հետ տարա

Մատներիս ստվերները կատարելապես ճկվում են
Կաթնագույն ազդրերի գոգավորություններին համապատասխան

Կրքերի բորբոքումից
Գլուխը բարձրացրեց
Որ կուլ տա մատներս
Բայց ես ձեռքս փախցրի

Մատներիս ստվերները
Սողացին վեր դեպի շուրթերը

Լիզում է ստվերները
Խոզի պես լափում մատներիս սև շողքերը
Եվ ինչպես արևը հորիզոնի հետևը
Ստորին կոպի հետևն են կայֆից սուզվում աչքերը
Հանկարծ վեր թռավ որ մատներս կծի
Թռա թախտի վրայից
Ու փախա

2005

Դու պլյուս իմ պուլս

Վազելով անցնում եմ սրա նրա կողքով
Վազելով անցնում եմ ծաղիկների վրով տակով
Քարերի վրով տակով
Գունավոր կոշիկների տակով վրով
Գլուխների միջով
Վերնիսաժի կտավների ներկերի միջով
Բոլոր գույները փախնում են գլամուրից
Վազում եմ շորերի միջով
Շշերի միջով
Քայլերով խաչեր անելով
Խաչմերուկների վրա խաչ քաշելով վազում եմ
Մեխվում եմ աբտոբուսից մի սանտի հեռու
Սիգնալ գովազդ
Խլացուցիչ պայթուցիկ
Սիգնալ գովազդ
Վազելով անցնում եմ
Շարժիչներ բջջային զանգեր կտկտոցներ
Մենախոսություններ
Սիգնալախոսություններ
Վազելով խփվում եմ անցորդների ուսերին
Վազելով լսում եմ
Հա
Չէ
Բարձր
Չի լսվում
Բարձր
Ալո
Ալո
Կտրտում եմ ռադիոալիքները
Վազելով խփվում եմ շենքերին
Հակառակ ուղղությամբ վազող շներին
Վազում եմ ինտերնետ կայքերի միջով
Կասպերսկու Նորթոնի ֆայերուոլի բարիկադները փշրելով
Մի նրբացնքից ներբեռնվելով
Մի պողոտայում վերբեռնվելով
Վազում եմ ուժերի գերլարումով
Խանութների հայելիների միջով

Մայթի ծառերի ճյուղերից կախվելով
Ֆորեսթ Գամփին վազքով տալով անցնելով
Հեռախոսահամարները գովազդային վահանակներից պոկվում
Խփվում են դեմքիս
Հորիզոնական դիրք ընդունելով
Վազում եմ փողոցային լապտերների վրայով
Ինչպես խաչմերուկների մաշված զեբրերի սյունակներով
Վազելով անցնում եմ փողոցից փողոց

Քաղաքը չի վերջանում
Ո՞ւր ա պուլսիս հարվածների տակ բրեյքդանս պարող աղջիկը
Քաղաքը Երկրագնդի պես կլոր է
Վազելով բարձրանում եմ առաջին պատահած շենքի վերջին հարկը
Վազում եմ կտուր առ կտուր
Խփվում անտենաներին
Չափալախվում արբանյակային ափսեներին
Հեռուստաէկրաններին հայտնվում մի միլիվայրկյանով
Իբրև սուբլիմինալ հաղորդագրություն—
Ո՞ւր ես պուլսիս հարվածների տակ լուռ պարող աղջիկ

2004

Միայնակություն

Միայնակ եմ ինձ զգում
Երանի մարդիկ լինեին շուրջս
Նրանց մասին գրված կոյտերով բանաստեղծությունների փոխարեն

2006

Գիշերային ակումբ

ԾԻԾ

ʊ$ʊ

ՍԻՍ

Give Peace a Fuck

Խաղաղություն ե՞ս ուզում
Պատրաստվի ~~պատերազմի~~ սեքսի

Շինի խաղաղությունը
Հա հղիացրու
Պատերազմը խաղաղության դաշտանն է

2008

Ռազմագերիների փոխանակում

Ռազմագերիների ռազմագերիները
Գժվում եմ ժպիտիդ համար
Հեշտոցիդ հորիզոնական տարբերակը
Գժվում եմ հեշտոցիդ համար
Ժպիտիդ ուղղահայաց տարբերակը
Նրանց համադրումից պլյուսի նշան կստացվի

Ինձ գումարի

Մեր գումարելիների գումարը
Ինձ չի հանի կոորդինատային համակարգի
Բացասական առանցքից

Մենք պարզապես կհանդիպենք
Մեր առանցքների խաչմերուկում
0 սահմանի բերանը
Իբրև ռազմագերիների կփոխանակենք
Մեր խոշտանգված օրգազմները
Ու յուրաքանչյուրս նորից կվերադառնանք
Մեր պաշտպանական դիրքերը

2005

Ես այլասերվածի մեկն եմ

Ես ուզում եմ պոեզիային

2007

Պոեզիա եմ ուզում

Ես բանաստեղծություն եմ ուզում գրել
Ես ուզում եմ բանաստեղծություն անել
Հենց հիմա
Շատ եմ ուզում
Շատ
Էնքան շատ եմ ուզում բանաստեղծություն գրել
Որ բանաստեղծություն գրել ուզենալուց բացի
Ոչ մի բան չեմ ուզում
ՈՉ ՄԻ ԲԱՆ
Անգամ բանաստեղծություն գրել չեմ ուզում
Էսքան տարի ինչ բանաստեղծություն ասես որ չեմ գրել
Բայց ոչ մեկի ժամանակ էսքան չեմ ուզեցել բանաստեղծություն գրել
Ինչքան հիմա
Էնքան
Էնքան եմ ուզում բանաստեղծություն գրել
Ուզում եմ ուզում եմ ուզում եմ
Էնքան ուժեղ եմ ուզում բանաստեղծություն գրել
Որ բանաստեղծություն գրելու անչափ ցանկությունիցս բացի
Խելքս բան չի կտրում
Դրա համար էլ մենակ գրում եմ
Թե ինչքան եմ
Անբավարարելիորեն
Անծայրածիր
Անսանձելիորեն
Անդադար
Մեռնելու չափ
Գազանաբար
Հիվանդագին
Խելակորույս
Հավերժաբար
Պարզապես
Ուզում բանաստեղծություն լինել

Երեքշաբթի, դեկտեմբերի 13, 2005, 16:14:15, Լոս Անջելես, Կալիֆորնիա

Երանելի աշխատանք

Թղթեր ա որ թերթում ա
Խորացած
Ցուցամատը մտցնում ա բերանը
Հանում ու թերթում
Սրճարանի մի անկյունում
Մտցնում բերանը հանում մատն ու թերթում
Հերթական էջը դարսում
Արդեն թքոտված փաստաթղերի կույտի վրա

Շեֆը
Լարած խաղալիքի պես
Շուրջն ա պտտվում
Հեռախոսով խոսում
Մազերն աչքներից հեռացնում
Մոտենում
Կարճատեսի ակնոցը հանում հեռատեսինը դնում
Գործի ընթացքը ստուգում
Ինչ-որ կիսատ-պռատ մեկնաբանություններ անում

Էս աղջիկն էլ տակից շեֆին նայելով
Մատը մտցնում ա բերանն ու հանում
Գլխով անելով
Մտցնում հանում
Մտցնում հանում թերթում ու դարսում
Ինքնամոռաց

Երբեք տանել չեմ կարողացել
Թերթելիս մատ թքոտելը

Իսկ հիմա
Աշխա՛րհ աշխա՛րհ
Սրճարանի մի անկյունում վեր ընկած
Թուքս եմ մոռացել կուլ տալ
Աչքերս չռած հետևում եմ
Թե ոնց ա չքնաղը
Իմ հաշվարկներով
Արդեն հարյուր չորսերորդ էջը թքոտում

Հինգ-վեց դար առաջ Քուչակը կբացականչեր «Թքոտած թղթերուն կապոցն ի
յիս պիտէր Զիս հազա՛ր դեկան դա գնած
Բայց յիս ուրիշ բան պիտէր
Պիտէր նոր աշխատանք

«Զոն ջան ցամաքել է բերանն աշխատողիդ
Ժամական տուր ինչքան դեկան սիրտդ ուզի
Թեկուզ կամավոր հիմունքներով
Մենակ թե նստեմ կողքը չքնաղի
Մատը բերանս կամ մատս բերանը
Սուզի թաթախի հանի ու թերթի
Ինչքան փաստաթուղթ որ սիրտդ ուզի»

Աշուն ա
Սրճարանը փակվում ա հինգ րոպեից
Փաստաթղթերի տրցակի վրա
Տերևների պես թափվում են
Գործավարի մատները

2006

Մարտյան մատներ

Ատամներիցս սպիտակ
Ատամներիցս երկար
Ատամներիցս փափուկ
Մատիկներ կան բերանիս մեջ
Բաց չեմ թողնի

Արմսթրոնգն այդքան չէր ուրախացել
Լուսնի վրա իր իջնելուն
Ինչքան ես այս սպիտակ մատների տիրոջ վրա

2004

Ամերիկանիզմներ

Դու ինձ հա հիշացնում ես ամրագոտին կապելու մասին
Ամեն անգամ մեքենայով ինձ դես ու դեն փոխադրելուց

Գիտեմ
Դու ուղղակի չես ուզում մենթերի հետ գլուխ դնես

Բայց մեկ ա
Էդ հուշումները էնքան գոտեպնդող են
Սեփական անվտանգությունը աչքաթող արած իմ նման մեկի համար

Ամեն անգամ ինձ տեսնելուց հա հարցնում ես
Թե ոնց եմ

Գիտեմ
Իմ մրմնջոցին ուղղված քո պատասխանը
Հերթական ավտոմատացված մի հատ ժպիտ ա

Բայց մեկ ա
Գեղեցիկ ժպիտդ տեսնելը շատ ա մխիթարում
Եթե ոչ *ամբողջ* աշխարհը
Գեղեցկությունը փրկում ա իմ աշխարհը

Դու հա ասում ես որ չափից շատ եմ քֆրտում

Գիտեմ
Դու ուղղակի ատում ես էդ բառերի հնչյունաբանությունը

Բայց մեկ ա
Դու ինձ օգնում ես մտածել որ կյանքն էնքան էլ ոռի չի
ու անընդհատ խնդրում ես որ քո համար սիգարետ փաթաթեմ

Երբ առաջին անգամ հարցրի դեմ չե՞ս
Թղթի ծերը պիտի լզեմ որ կպնի

Դու գլուխդ տարուբերեցիր ու ասիր որ
Դա կհզորացնի իմունային համակարգդ

Գիտեմ
Առողջապահությունը քո մոտ առաջին տեղում ա

Բայց մեկ ա
Ես ուրախ եմ որ մանրեի չափ օգտակար եմ

Դու ինձ հա հիշացնում ես որ պահպանակ ա պետք հագնել
Երբ բանը ոսկորին ա հասնում

Գիտեմ
Դու պարզապես ապահով սեքս ես նախընտրել

Բայց մեկ ա
Քաջալերվում եմ էն մտքից
Որ ինձ ես նախընտրել նախընտրությունդ իրագործելու համար

Դու ամեն անգամ շնորհակալություն ես հայտնում
Յուրաքանչյուր կենակցումից հետո

Չնայած մոտս նենց տպավորություն ա ստեղծվում
Թե բարձրակարգ մթերային խանութից մի կիլո սեքս եմ առել

Բայց մեկ ա
Սփոփվում եմ գիտությամբ
Որ բարի ժամանց ես վայելել

Դու ինձ մի անգամ ասիր եթե կյանքում մի տող էլ գրած չլինեի
Չէի դադարի պոետ լինելուց

Գիտեմ
Դու պարզապես փորձում էիր ինձ սիրտ տալ
Գրողական կեղեքիչ «հրադադարի» ընթացքում

Բայց մեկ ա
Ինձ հանկարծ թվաց գրածս տողերից
Ոչ մեկն ինձ պոետ չէր դարձրել

Դա հաջողվեց քո խոսքերին
Գոնե մի ակնթարթով

2005

Այլևս

Էլ ոչ մի «կարծում եմ»
Էլ ոչ մի «կասկածում եմ»
Էլ ոչ մի «երևի»
Էլ ոչ մի «թերևս»
Էլ ոչ մի «գուցե»
Էլ ոչ մի «միգուցե»
Էլ ոչ մի «մոտավորապես»
Ես սիրահարվել եմ
Վերջապես

2006

Ես սիրում եմ քեզ ըստ Google-ի

Որոնվող բառ	Արդյունքներ
Ես	**2.610.000.000**
Սեր	**436.000.000**
Դու	**5.140.000.000**
Ես սիրում եմ քեզ	**840.000.000**

Ատելություն	**86.600.000**
Սեր	**121.000.000**

Տվյալների վերլուծություն

1. Ես տառապում եմ անհատականության դիսոցիատիվ խանգարում (բաղկացած եմ մինչև 2.610.000.000 անձերից);
2. Դու՝ էլ ավելի (5.140.000.000);
3. Մենք ավելի շատ ենք քան սերը (2.610.000.000+5.140.000.000>436.000.000);
4. Ավելի շատ «ես սիրում եմ քեզ» կա, քան «սեր»: Հետևաբար «ես սիրում եմ քեզ» ասող մարդկանց համարյա կեսն իրականում քեզ չի սիրում (840.000.000>436.000.000):
5. Մի բան լավ է, որ «ես ատում եմ քեզ» ասող մարդկանց մոտ կեսն իրականում քեզ չի ատում (86.600.000>121.000.000);
6. Իսկ ամենակարևորը՝ կա ավելի շատ սեր, քան ատելություն (436.000.000>86.600.000);
7. ՈՒՌԱ՛

2006

Տե՞ր ես

Շիկահեր տեր մայրը ճարպկորեն խցկեց գրպանը
Կանխիկ գումարը
Ու Լաս Վեգասի
Կեսգիշերվա աղմուկ-աղաղակի ներքո
Հազիվ լսելի հարցուփորձ արեց
Տե՞ր ես
Տեր ենք
Հնազա՞նդ ես
Հնազանդ ենք
Հիմա ո՞ր մեկդ
Մենք

2008

Կնոջ կլիշե

A իրա կիսատ իջացրած տրուսիկն ա

B իրա տուտուզն ա զուգարանակոնքին նստած ժամանակ ոտքի եղունգները կռացած կտրելու ժամանակ

C իրա կտրած եղունգների թռած կտորտանքներից մեկն ա որը դեմքիս մի հատ սիլլա տվեց

D իրա լեզուն ա որը հանել ա շուրթերի արանքից ի պատասխան ավելի զգույշ լինելու իմ խնդրանքին

E իրա երեք մատներն են որոնք ինձ հավաստիացնում են որ ինքը պատրաստ կլինի 3 րոպեից

F իրա երկու մատներն են որոնք ինձ հավաստիացնում են որ ինքը պատրաստ կլինի 2 րոպեից կես ժամ անց

G վերին ատամնաշարի տակ իրա ստորին շուրթի ճզմումն ա որով ինքը քիչ առաջ տեղի ունեցած հեռախոսազրույցում իրան ակնարկված ուշացման հեռանկարի մասին իրա մտահոգությունն ա արտահայտում

H իրա իրանն ա գոտկատեղը չափող ինչ-որ պարանով օղակված

I ես եմ ում ինքը խնդրում ա գրի առնել իրա գոտկատեղի էսօրվա չափը քանի գլխից չի թռել

J սենց ա ուզում իրա մազերի աջ փաղանգը կորանա ֆէնի օգնությամբ

K իրա նազանքով տձևացած ոտնաթաթն ա ելակակարմիր բարձրակրունկ կոշիկի մեջ որի չկոճկած բարակ երիզը տնկված ա ու թեթևակիորեն թրթռում ա ամեն անգամ երբ արագ-արագ անցնում եմ կողքով

L իրա մյուս ոտնաթաթն ա որը պարապ-սարապ սպասում ա թե երբ կհասնի ելակակարմիր բարձրակրունկ կոշիկի թայի մեջ տձևանալու իրա հերթը

M Իրա վերին շուրթն ա որն ինձ օդային համբույրներ ա ուղարկում ի

պատասխան առանց իրա թողնել-գնալու իմ փուչ սպառնալիքներին

N իրա թիթիզ շրջազգեստն ա որը մենակ իրա ձախ ոտքն ա ծածկում հսկայածավալ արևածաղիկներով

O իրա լայն բացված բերանն ա իրա թարթիչների ծավալը զգուշորեն բազմապատկելու պահին

P նրա կրծքի կիսադեմն է խորը ներշնչումից փորը ներս քաշած ժամանակ

Q մեր փոքրիկ փիսիկի պոչն է որը ես գողեգող խցկում եմ նրա լայնաբաց բերանը մինչ նա զգուշորեն բազմապատկում է իր թարթիչների հաստտությունը

R իրա կրծքի կիսադեմն ա երբ թևերով երկու կողմից սեղմում ա իրա կուրծքը առավելագույն փքվածության ժամանակավոր էֆեկտ ստանալու համար որը շուտով հոդս ա ցնդում հենց իրա ծիծաղի պայթյունից

S իրա խոպոպիկների մի բարակ խուրձ ա որը ինքը հեռացնում ա իրա գեղեցիկ դեմքից ինչ-որ անտեսանելի պզուկ մատներով վերացնելու ու արդյունքում տեսանելի հետք թողնելու նպատակով

T սենց տեսք կստանային իրա ունքերը եթե մեկ շաբաթից ավել չկարողանար գտնել պինցետը

U իրա միանգամայն լայնարձակ բլթակն ա ինչը ինքը համոզված ա որ սիրառատության նշան ա

V իրա տրուսիկի դիմացի հատվածն ա որը երևաց երբ որ ինքը որոշեց փոխել շրջազգեստը

W էն ինչ իրա տրուսիկի դիմացի հատվածի հետևում էր թաքնված և հայտնվեց երբ նա վերջնականապես հանեց էդ տրուսիկը որ փոխարենը ստրինգ հագնի

X իրա քիթն ու քթի արտացոլքն են երբ որ թախծոտ հպվեց պատուհանի ապակու վրայի իրա արտացոլքին ինչը նկատեցի հայացք նետելով վերևից իրա հետևում կանգնած մինչ անձրևի կաթիլները ռմբակոծում էին մեր փողոցը

Y այ սենց տեսք կունենար իրա դեմքը պատուհանի մյուս կողմում թրջված շան ձագին քացով խփող անչափահաս տղայի պատճառով ունքերը խոժոռելիս եթե տենց էլ չգտներ պինցետը

Z իմ հարբերության վերջն էր երբ իրան դուրս քաշեցի տնից խցկեցի մեքենան ու ճղցրի փորձելով մեր ուշացման համար գտնել մի հատ հարմար արդարացում

2008

ԱԺՂԱ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Նացիստ

Պարզ երևում է
Ուզում ես տանս մեջ
ցեխոտ կոշիկներով կանգնել
մերկ մարմնիս վրա ու
կոխել պատին սեղմված գեղեցկուհի կնոջս

Ես վեր թռա
Թուղթ կերա
Մի ուրիշ թղթի վրա
Գրիչով հարձակվեցի
Գրիչը չէր կպնում թղթին
Մատներս չէին կպնում ստեղնաշարին
Մատներիս հետ բազկամարտի էի սկսել
Թուղթը խժռեցի

Ես անգամ ոչնչի մասին չէի կարող գրել
Քանզի այն իսկույնևեթ կվերածվեր ինչ-որ բանի

Շիզոիդ հուսահատությամբ
Նայեցի պատին
Հայացքս, սակայն, չճաշակեց պատը —
չորս կողմս պատերը պատված էին
բազմաթիվ գրադարակներով որոնք
ծածկել էին ինձ շրջապատող բոլոր պատերն անխտիր
Գրադարակների մեջ
Գրքերը կողերով դեպի պատն էին շարված

Սա է որ կա -
Իմ իսկական
Իմ հսկայական կտավը
Որի վրա
Ես ստեղծագործում եմ

Ինչո՞ւ

Ես դուրս եմ քաշում
չափերով ահագին իմ նյարդապնակը

վրան նյարդերիս բոլոր երանգների խայտաբղետ գամման
ցասումով ցաք ու ցրիվ ցփնված

Ես ծափ տվեցի ձեռքերս մի քիչ քայլեցի բաղնիքը վազեց մոտս
լվացվեցի, վերադարձավ, երկու, արդեն լավ նյարդոտված ձեռքերով
բռնեցի գորգի վրա կանգնած ոտքերս որոնց վրայի մազերը
ջանադրաբար փաղաքշում էր գորգի մագնիսական դաշտն իր
կախարդական փերիներով դարձրի ինձ գլխնիվայր գլխիս թրջված
մազերը թաթախեցի վառվռուն նյարդապնակիս մեջ, որը վայրկյան առ
վայրկյան հարստանում էր նորանոր նյարդե նրբին ենթաերանգներով ու
ընդարձակ կտավիս վրա նկարեցի բազմերանգ թափված տերևներ ու
մրջնանոց դարձած կնոջ կուրծք, պտուկի միջից ելնող մրջյուն հետո այդ
պատկերն սոdo արեցի ու նույն տեղում հազարավոր գրքերից կազմված
կտավիս վրա
նկարեցի
ծավալուն
ինքնանկարս

Ես հիանում էի

Մինչև ժամը քսաներեքն անց հիսուն:
Սակայն քիչ հետո
Երբ նրանք եկան
Ես մեգալոմանիայի բարձունքներում էի գտնվում
Ու յուրաքանչյուր այցելուն
խախտում էր լպիրշորեն
տոտալացած վեհության մոլուցքիս
մարգինալ թույլատրելիության սահմանները
Ես խոր հիասթափության էյֆորիայի մեջ էի
Ես հայտնեցի նրանց ու
հայտնում եմ նաև ձեզ
Որ արարելու եմ այնպիսի մի ստեղծագործություն
որը պարադոքսի առաջ կկանգնեցնի -
ինքներդ որոշեք ում.

Արարելու եմ մի գործ, որով կպարզվի, որ իրականում «արվեստ» բառը
առաջացել էր մինչև «արվեստ» երևույթի առաջանալը
Այսինքն սկզբում առաջանում է նշանակիչը այնուհետև նշանակյալը

այն էլ՝ հազարամյակներ անց, այն էլ իմ շնորհիվ!
Եվ այդ ասում եմ ես՝ շիզոֆրենիա
ծնած XX դարի ծնունդ
«XXI դարից ալերգիա» զանգվածային հիվանդությունն առաջացնող
Դարաշրջանի
Միջին վիճակագրական

Ես նացիստ եմ
Ազգությամբ արտիստ եմ

Ես նայեցի հանդիսատեսների վրա
Թվաց գտնվում եմ ծուռ հայելիներով պատված սենյակում
Անհանիգստ
Մենակ

Նրանք ամբողջ ժամանակ ինչ-որ բանով զբաղված էին
Ինձ այցելածների հետ ինքս էի շփվում
Բայց ինքնանկարիս այցելուների հետ շփվելու համար
Ես չէի ծամածռում վիթխարի ինքնանկարս
Մեծ արագությամբ տեղափոխելով որոշակի գրքեր
Իմ վիթխարի ինքնանկարը բոլոր հնարավոր տրամադրությունները
Դիրքերը տարիքները վիճակները կոնտեքստները ընդհանրացնող
պատկեր էր

Կտավն ինքը հրաշալի էր. ես ստից գրքեր չեմ պահում:

Մի անչափահաս աղջիկ
հռհռոցը գլուխն էր գցել
Ես հանգիստ նայում էի նրա
ծայրաստիճան ճկված շուրթերին
Թվաց՝ զուգարանում նայում եմ ունիտազի մեջ ջուրը քաշելիս
Նրա շատրվանած բուռն լոզերի մեջ
շնչահեղձ եռանդով հասցնում էինք տեսնել
նկարիս բզկտված արտացոլքը
տարօրինակ ուոլիորյան շարք էր
շարունակ CRESCENDO

Ես ավելի ու ավելի ուժեղ էի գիտակցում որ երբեք անվանումն ու իրը
նույնական լինել չեն կարող հետևաբար բուն ճշմարտությունը
համենայնդեպս լեզվով արտահայտելի չէ եթե այն ինքը լեզուն չէ!

Այսօր ամառվա մեջտեղն է

բայց ինչքան ավելի հեռվից նայեի,
այնքան ավելի գեղեցիկ էր նա թվում,
ճիշտ ինչպես իմ հեռավոր ապագան:

Ինձ մոտ ամեն ինչ ճիշտ ժամանակին է
Անգամ ուշանալս է ճիշտ ժամանակին

Ես ամեն ինչում ընտրում եմ ընտրության հնարավորությունը

Բայց ես զգում էի՝ ինչպես եմ կորցնում
իմ հավասարակշռությունը
այնուհետև ձերը
տարածական կողմնորոշումս
ժամանակի զգացումս
ձեր ժամանակի զգացումը
ես կորցրեցի խղճիս խայթը
կորցրեցի խայթիս խիղճը
ինձնից թաքնվեցին հագիս շորերը
ես կորցրեցի երաժշտական լսողությունս
Տնից գնալիս մտնում եմ դուրս
Տուն գնալիս մտնում եմ դուրս
ես վռնդեցի համայն տիեզերքում ինձ ամենանվիրված ու ինձ
ամենասիրող էակին
որովհետև հավատս չէր գալիս
Որովհետև
Պե՛տքս էլ չէ՛ր

Որովհետև ես ավելի շատ իմպուլսներ եմ սիրում քան կանանց —
Պատրաստ եմ զոհաբերել վերջիններիս
Հանուն Առաջինների!

բոլոր կողմերից ձայներ
ոչ մի ձայն ոչ մի կողմից
ո՛չ ձայներ ո՛չ կողմեր
Շիզոիդ հուսահատությամբ
ես սկսեցի հաշվել մատներս
հաշվից ընկա ճագարի բնի մեջ

Սակայն ես քիչ անց զգացի
որ բոլորովին այլ բան է կատարվում ինձ հետ
Ես իրականում զգում էի
ճագարի բույնն է իմ միջով ընկնում
ու տեղ չի հասնում

Իր զանգերը զրնգացնելով
Հայկական եկեղեցին
Իր հինգ գմբեթները շխկշխկացնելով
ճանապարհ անցավ
հասավ ինձ
մի քիչ մլավեց
իմ միջով ճագարի բնի անկումը
մոմով լուսավորեց ու տեսնելով որ
վայրէջք երբևէ չի սպասվում
մոմը հանգցրեց
ճանապարհ կտրեց
գնաց հոգևորականների մոտ
վառեց մոմն ու ծնկեց
մեղքերի թողություն խնդրեց նրանցից

ես չէի կարողանում տարբերել տեսածս
չէի էլ կարողանում տարբերել տեսածս է դա լսածս է դա ո՞ւր եմ
գաղթում եմ երիտասարդությունիցս
հակառակի պես գիշեր է սև
օ չեմ կարողանում գլուխ հանել
անհնար է տարբերել
հարազատ քաղա՞քս է իր լուսարձակ ուլունքներով կուրացնում
թե՞ աստղալից երկինքն է իր համաստեղություններով ժրում
բռիս մեջ
կամ օվկիանոս
որի մեջ թե՞ քաղաքը
թե՞ աստղալից տիեզերքը
գտել էին իրենց արտացոլքները
Եվ ես նիրվանայի մեջ էի
Ո՞ւր էի հասնում
Ուր որ քարավանն
Առանց ուղտերի

Բայց դա կարևոր չէ

ուրեմն
ի՞նչ եղավ ընկնող ճագարի բնի հետ
կամ ընկնող բնի ճագարի հետ
կամ ընկնող ճագարաբնի հետ
կամ ինչո՞ւ էր ընկնում այդ ամենը
կամ ինչո՞ւ հենց այդ ամենը
կամ
ախր ի՞նչ պատասխան տամ այդ ամենի վերաբերյալ
ի՞նչ սպառիչ պատասխան
ի՞նչ իմաստ ունի պատասխանն ընդհանուր հաշվով
եթե ինքս մի նշույլ անգամ չեմ հասկանում
ինչում է ընդհանրապես կյանքի իմաստը

Կյանքի իմաստը կյանքին իմաստ հաղորդելու էքսպերիմենտների մեջ է

Յուրաքանչյուր պատասխանին հետևում է հռետորական մի հարց.
Հետո՞ ինչ
Քյառպի՛նջ

Ի՞նչ
եր
եմ
ցույց տալու
Տեսե՛ք,
Կառչե՛ք
Պահի՛ց

Թարթելիս նրա աչքերն անցնում էին լուսնի բոլոր փուլերը
Տեղատվությունն ու մակընթացությունն իմ ներսում
իրար տվին: Նա ինձ հպվեց
ճիշտ ժամանակին
ճիշտ կետիս —
մազերը տոտալ փշաքաղանքից
ցցվել էին Նյու Յորքի երկնաքերների պես
Ողջ մարմնովս մեկ

Նա անշտապ լիզում էր լեզվաքերներս

Իսկ ես հետևից սափրում

Եվ ի՞նչ եք կարծում
Ինչո՞ւ ստեղծագործել

Անձամբ ինձ համար այդ հարցն այլևս կորցրել է
իր երբեմնի ակտուալությունը.
ստեղծագործելն ինձ համար
նույնքան բնական ու անպայման պահանջ է
որքան միզելն ու կղելը

օրական այնքան բառ ու տեսարան ու գաղափար եմ խժռում, կուլ տալիս
որ վազում եմ իմ ստեղծագործական զուգարանն ու
նստում իմ ունիտազ-համակարգչի առջև ու սկսում
ամենաէսթետիկական
ամենաիմաստուն
ամենաանհեթեթ
արտաթորումը!

Ձեզ անհայտ մի ձեռք հասցեագրել ուղարկել էր
այս Ստեղծագործությանը
ցպահանջ
ինչպես ինքներդ կարող եք վստահանալ
ձեզ ստեղծագործությունն արդեն ստացել է
կարդում է
պատասխան է գրել - vide supra

2002

Պոետի կարդիոգրամման

Պոեզիա լեղապատառ կվազե՞ք Պոեզիայի ամենավերևի տողից կգցվե՞ք Պոեզիա կսրսկվե՞ք Պոեզիա կլափե՞ք Պոեզիա կշռե՞ք Պոեզիա կկռվե՞ք Պոեզիա կծակվե՞ք Պոեզիա կբմբմլե՞ք Պոեզիա կպաչվե՞ք Պոեզիա կհեղափոխե՞ք Պոեզիա կմերկանա՞ք Պոեզիա ոռնա՛ ոռնա՛ Պոեզիա ծիծաղի՛ Պոեզիային քունեք կընգնեք Ես ընգել եմ Պոեզիա հռհռա՛ Պոեզիա կգնդակահարե՞ք Պոեզիա կբարձրանա՞ք Պոեզիա կաղաչե՞ք Արվեստը բարձր է սիրուց Մեծ է սիրուց Արվեստը մեջս անգամ տեղ չարեց ես բավական չէի միջիցս թափվում է ցայտում Պոեզիա Պոեզիայի անհամար թշերը կչափալախե՞ք Պոեզիա կղժժժա՞ք Պոեզիա կճվճվա՞ք Պոեզիա կշորթե՞ք Պոեզիա բառաչելով կմորթե՞ք Պոեզիա կհաչա՞ք Պոեզիա քսի կտա՞ք Պոեզիա արածողների վրա Պոեզիա կքաքե՞ք Պոեզիա կկակազե՞ք Պոեզիա տնքա՛ Պոեզիա կսանրե՞ք Պոեզիա կգողանա՞ք Պոեզիա կաճացնե՞ք Պոեզիա կհանդիպե՞ք Պոեզիա կզոդե՞ք (Արվեստ + Փիլիսոփայություն + Գիտություն + Քաղաքականություններ + Սպորտ + Բիզնես + c+++etc)^{n} – Պոեզիա = Պոեզիա Արվեստը սիրուց դիմացկուն է սիրուց գեղեցիկ Պոեզիա Պոեզիաքամ եմ լինում Պոեզիա կկախարդե՞ք Պոեզիա կջրիկանա՞ք Պոեզիային կգրգռե՞ք Պոեզիա կզոհաբերե՞ք Պոեզիա կասֆալտապատե՞ք Պոեզիա կբետոնապատե՞ք Պոեզիա կստրկացնե՞ք Պոեզիա կթռցնե՞ք Պոեզիա կկզցնե՞ք POP-Պոեզիա շնանալ կլրով & շնանալ պոեզիայով Պոեզիա՛ հեՆց հիմա՛ Պոե՛զիա հեՆց՛ հիմա՛ Պոեզիան մարգարեության համար նույնն է ինչ կուռքը Ճշմարտության Պոեզիայի հետ հարբե Նք Պոեզիա շտապեՆք Պոեզիային կվախցնե՞ք Ռանդևու Պոեզիայի մեջ Պոեզիա կճանաչե՞ք Պոեզիայի մեջ կթափե՞ք տեխնոկրատ Պոեզիա Պոեզիան կբռնաբարի Պոեզիան կթքի՞ Պոեզիա կականազերծե՞ք Պոեզիա կժպտա՞ք Պոեզիա կպարե՞ք Պոեզիային կնախանձե՞ք Պոեզիայից հայտնի կլինե՞ք Պոեզիա կվիրահատե՞ք Պոեզիա Պոեզիա կխորխե՞ք Պոեզիա կքոքե՞ք Պոեզիային պոզեր կդնե՞ք Պոեզիա կբխկա՞ք Պոեզիա կմաշկե՞ք Պոեզիա ժաժ կտա՞ք Պոեզիա կկլպե՞ք Պոեզիա կբուժե՞ք Պոեզիա կսխկե՞ք Պոեզիա կկրտե՞ք Պոեզիա կայլասերե՞ք Պոեզիա կգրե՞ք Նորածին Պոեզիայի ոռը կսրբե՞ք Պոեզիա եմ լարում Պոեզիա-կամիկաձեի լեզուն ատամներովս դակած սուրում եմ պատրաստ ամեն ինչի ուր էլ տանի Պոեզիայի սանրվածքը խառնե՛ք ուղարկե՛ք հեղափոխության Պոեզիային փաթաթեք թևներիդ չափե՛ք ձեր սրտի ճնշումը Պոեզիայի հետ TV նայեք ձեր հոգու արվարձաններն ու գետտոները Պոեզիային հանվացրեք ու մեջը դրե՛ք Պոեզիա կիրականացնե՞ք Պոեզիայից երեխա կուզենա՞ք Պոեզիա կարգելե՞ք Պոեզիա կջնջխե՞ք Պոեզիա կծաղրե՞ք կկանչե՞ք դուելի Ե՛րգի Պոեզիային կզինակցե՞ք Պոեզիային սահմանում կտա՞ք Պոեզիա կխլացնե՞ք Պոեզիա կկուրացցնե՞ք Պոեզիա կլռե՞ք Պոետիկ կմահանա՞ք Պոետիկ կանմահանա՞ք Պոեզիա կքաղաքականացնե՞ք Պոեզիան սեպտեմբերի 11 կանե՞ք Պոեզիան մեծահոգի՛ է

Պոեզիա կհարցնե՞ք Պոեզիա կհռհռա՞ք Պոեզիային բոզի կտանե՞ք Պոեզիային կհասցնե՞ք ինքնասպանության Պոեզիան տեղ կհասցնե՞ք Պոեզիա կգժվե՞ք Պոեզիաքամ եմ լինում Պոեզիա կկլոնավորե՞ք Պոեզիա կխելագարվե՞ք Պոեզիա կգժվե՞ք Պոեզիա կցնդվեք Պոեզիա կհարբե՞ք Պոեզիա կդավաճանե՞ք Պոեզիայով մեկ կզբոսնե՞ք Պոեզիա կթաքցնե՞ք Պոեզիայից կամաչե՞ք Պոեզիա կբոքսե՞ք Պոեզիան խցկե՛ք իմ կորած սև կատվի ոռի ծակն ու ջերմաստիճանն ինձ հաղորդեք Պոեզիա կխոսցնե՞ք Պոեզիայի համար կնստե՞ք Պոեզիա կխլնքոտե՞ք Պոեզիայի աչքերը չե՛ս փակի Պոեզիա կշշմցնե՞ք Պոեզիա կգոյատևե՞ք Պոեզիան պետքներդ ա՞ Պոեզիայով կգրոհե՞ք Ե՛րգի Պոեզիային 39 անգամ կդաղե՞ք Պոեզիա կդավանե՞ք Պոեզիան ձեր բանկային հաշվի մեջ կդնե՞ք Պոեզիա կթսե՞ք Պոեզիան մեծահոգի է Պոեզիա կտռե՞ք Պոեզիա կկոխրջե՞ք Պոեզիաբուրգեր կխժռե՞ք Պոեզիա կսոսնձե՞ք Պոեզիա կցռե՞ք Պոեզիայի վրա Պոեզիա հա-ից ու չէ-ից անդին Պոեզիա կպլստա՞ք Պոեզիա կքորե՞ք Պոեզիա կտիրաժավորե՞ք Պոեզիա կտիրաժավորե՞ք Պոեզիա կտիրաժավորե՞ք Պոեզիա կտապակե՞ք Պոեզիա կգլորե՞ք Խաբված ամուսինները պոզահարում են Պոեզիա Պոեզիա կցուցադրե՞ք Պոեզիա կպրոլետարացնե՞ք Իսկ դուք կկարողանայի՞ք Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք իսկ իսկ իսկ Պոեզիա Սպասելիս Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Իսկ դո՞ւք Poetry – Be the F!rst to Know Արվեստը բարձր է Սիրուց հասուն որոնումների Պոեզիա Պոեզիա կնկարահանե՞ք Պոեզիա կփախնե՞ք Պոեզիայի շուրջ 80 օրում կանցնե՞ք Պոեզիա կխանդե՞ք Պոեզիա տոնե!!!նք Պոեզիա կմթնե՞ք Պոեզիա կմիացնե՞ս Պոեզիա կմրցե՞ք Պոեզիա կխռմփացնե՞ք Պոեզիա կկատակե՞ք 1000 ու մեկ Պոեզիա Պոեզիայի 40 օրը Պոեզիա 49 100 տարվա Պոեզիա Երեք Պոեզիա Ալի Բաբան և 40 Պոեզիաները X Պոեզիա/Պոեզիայում Պոեզիա կաստվածացնե՞ք Այսպես խոսեց Պոեզիան Պոեզիա կփաղաքշե՞ք կփղանա՞ք Պոեզիայի դեմ կընդվզե՞ք Մեր պատկերովը եւ մեր նմանութեան պէս պոեզիա շինենք որ իշխեն ծովի ձկների եւ երկնքի թռչունների եւ անասունների եւ բոլոր երկրի վերայ եւ երկրի վերայ սողացող բոլոր սողունների վերայ եւ բոլոր ժանտ հանցագործությունների վերայ Պոեզիա կվերափոխե՞ք Պոեզիա կգահազրկե՞ք Պոեզիա կսոցիալիզացնե՞ք Պոեզիային կվարակե՞ք ձեզնով Ե՛րգի Պոեզիա Պրոտեստ Պոեզիա Բողոք Պոեզիա ճահիճ Պոեզիա Պրոտեստ Պոեզիան 23 տարեկան է Պոեզիային լեզու կհանե՞ք Պոեզիան ձեր աչքի առջև է Պոեզիան լևիտացիայից կհանե՞ք Պոեզիա փշաքաղվե՞ք Պոեզիա կթրաշե՞ք Պոեզիաթափ Պոեզիացան Պոեզիահավաք 40 օրուգիշեր 20 000 լյո Պոեզիայի տակ պատրա՞ստ եք խեղդվել Պոեզիան տիղմից դուրս կքաշե՞ք քաշեք և դուք կազատվեք վայ մերը քունեմ ոնց որ Պոեզիայի վկա լինեմ սեկտանտ էպիդեմիա Պոեզիայի վարակ Պոեզիա ամենուր Եւ Աստուած կատարեց եօթներորդ օրումն իր գործքը որ արաւ եւ եօթներորդ օրը մեռաւ իր բոլոր գործքիցը որ արաւ քանզի Ճշմարի ճշմա Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ եթե Աստված ձեր մեջ ընկնելով չմեռնի ինքը մինակ կ'մնայ բայց եթե մեռնի շատ պտուղ կ'բերէ Պոեզիա կմահապատժե՞ք Աշխարհը մէ Պոեզիա է Poesium Mobile! Ագիտպոեզիա Պոեզիա Պոռնո Աստղ Պոեզիա Ռոք Աստղ Պոեզիա Փոփ Աստղ

Պոեզիա Պագոնի Աստղ Պոեզիա կխայտառակե՞ք Պոեզիա կթռչկոտե՞ք Պոեզիա կպպզե՞ք Պոեզիա կավլե՞ք Պոեզիա կմլավե՞ք իմ կատվի նման կլիզե՞ք Պոեզի՛ա Դո՛ւն Կրակ Հա՛գածդ Կրակ Դո՛ւն Կրակ Հա՛գածդ հագածդ սև Պոեզիա կմռթմռթա՞ք Պոեզիա.exe Պոեզիա կմրափե՞ք Պոեզիա կպորտապարե՞ք Պոեզիա Պոեզիա Պոեզիա աու Պոեզիա հեհեհեհե՛յ Պոեզիա կփնտրե՞ք Պոեզիա կռազմականացնե՞ք Պոեզիա կդիսկրիմինացնե՞ք Պոեզիա կռմբակոծե՞ք Պոեզիա կարթնանա՞ս Պոեզիա կքնե՞ս Բարի քուն քեզ Անցանք առա՛ջ Պոեզիա կերկրպագե՞ք Պոեզիա կշվցնե՞ք Պոեզիա ստե Պոեզիա ընդե Պոեզիա.swf Պոեզիա ամենուր Պոեզիա կցլցլա՞ք Պոեզիա կռենտգենե՞ք Ձեր փրթված երակներից Պոեզիաներ կցայտե՞ն Պոեզիա կաթաց գրգռված օրգաններից Պոեզիա կչիշիկացնե՞ք Պոեզիան բուռդ տա՞ Պոեզիա կկախվե՞ք Պոեզիան բուռդ տա՞ Պոեզիա կմեկնե՞ք Պոեզիա.jpg Պոեզիա.html Պոեզիան բուռներդ տա՞ Պոեզիայի ֆազզերը քցեց Պոեզիան վարարեց դողդողաց Պոեզիան դղրդաց Պոեզիան չի հոգնում Պոեզիա կսլանա՞ք Լույսի հետևից կհասցնի ու կգերազանցի միայն Պոեզիան բացում է թե լույսի թե մթան արագություն չունի դրանցից ոչ մեկի կարիքը Պոեզիայից կխռովե՞ք Պոեզիա կընկերանա՞ք Պոեզիան կներծծի ձեր դաշտանը O Let's make things better Poesia Պոեզիա գրքից անդին կնախաձաշե՞ք Պոեզիա կդաստիարակե՞ք Պոեզիա պատանդ կվերցնե՞ք Պոեզիա կոնտրես Պոեզիա էքստազ էքստրեմիզմ Պոեզիայի դեմ կոնտրկուլտուրա ուտոպիա փախուստ դեպի Պոեզիա խոսքի հայրենիք անարխիա կոնտրէքստազ կոնտրպոեզիա կոնտրուտոպիա կոնտրնրանք կոտրտանք կոտրտանք կոտրտանք կոտրտանք անտիպետություն անտիֆրիզ անտիմարդ հասարակություն Պոեզիան ձեր բուռը տա՞ Մե՛ռի Պոեզիան ձեր բուռը տա՞ Մե՛ռի Պոեզիան ձեր բո՛ւռը կտա Մե՛ռի Մե՛ռի Մե՛ռի հա հա հա հա անտիգալակտիկա հակամահ-հակակյանք կախարդանք փրկություն բունտ Փրկիչ Պոեզիա Պոեզիա Պոեզիա մինչև վերջ Պոեզիա Պոեզիա մինչև հերթական սկիզբ Պոեզիա Պոեզիա մինչև հերթական վերջ անելանելիություն սկզբից ու վերջից անդին բան չկա՞ Պոեզիա Պոեզիա Պոեզիա կա Պոեզիա≠Պոեզիա կան Պոեզիայի հարսնյակ պոետներ կան Պոեզիայի պարկուճ պոետներ ես Պոեզիայի սիգնալիզացիան եմ Պոեզիայի նկատմամբ բացառվում է ցանկացած Օքսիմորոն կան մի քանի օքսիմորոններ Պոեզիայի կապակցությամբ օրինակ Անախրոնիկ Պոեզիա Անատոպիկ Պոեզիա անաանտրոպիկ Պոեզիա և Օքսիմորոններ Պոեզիայի կապակցությամբ Ղարսի խորոված խժռող վրայից Կոկա Կոլա խմող պահպանակի դերում գույնզգույն պցերի մեջ խցկվող Պոեզիա Պոեզիան գոյության զոհաբերություն է բառին գոյություն ֆիքսող այդ տարրին Պոեզիան ավելին է քան բառը և դա է Պոեզիա գրելու հնարավորության գրավականը Պսիխոֆարմացևտիկ արդյունաբերության ֆարմակոլոգիական թունաքիմիկատային զրթուզիբիլային Պոեզիա Իմ 911-ը Պոեզիան է Պոեզիա կահազանգե՞ք Պոեզիա նյու կլուսանկարե՞ք Պոեզիա.doc Պոեզիա ատրճանակի փողի տակ Պոեզիա ճռցրած կա՞ք ROUTE 66-ի վրա Պոեզիային կբանտարկե՞ք ու ոռից կքունե՞ք Պոեզիա խաղ Պոեզիա ուրիշ ուրիշ

ուրիշ Պոեզիա Պոեզիային չեք շրջափակի Պոեզիային պոզեր դնելն անհնար է Պոեզիան ամեն ինչ ու ամեն ուր է Պոեզիան ամենուր է կհասնե՞ք հետևից Պոեզիային չեք հասնի չեք անցնի Պոեզիան ամենուր է Երկիր մոլորակը բոլոր գալակտիկաների ամենապոետիկ մոլորակն է տոներով պոեզիայով սեքսով պոետիկ պոռնո սայթերով պոետիկ բիզնեսով պոետիկ համաշխարհային պատմությամբ ու հատկապես պատերազմներով սովերով գժոտ տոնակատարություններով ծեծկռտուքներով դիսկոտեկներով քեֆերով օրգիաներով մեզնով պոետիկ համակենտրոնացման ճամբարներով Երկրի երկու կիսագնդերը հիշեցնող աչքերով ու ձեռքի ափերով ուղեղներով ու թոքերով ոռերով ու ձվերով ու կավիտացիայի չենթարկվող պոետիկ ծծերով պոետիկ հեղափոխություններով մահացու պոետիկ ձախողումներով ու դեպրեսիաներով աղերսներով ու ողբերով պոետիկ հառաչներով ու խլացուցիչ գոռգոռոցներով ու պոետիկ ցեղասպանություններով Պոետիկ դոլարներով Պոետիկ սերերով ու ատելություններով Բալիստիկ Պոեզիայով Պոեզիայի էպիդեմիա մոտս Պոեզիախտի վերջին փուլ Անբուժելի Պոեզիախտ Պոեզիաքամ եմ լինում Պոեզիա Պոեզիա Պոեզիա լիքը լիքը Պոեզիա Հայրական ճակատի մի քանի տող պոեզիայի տաժանակիր վերծանում մանկուց մինչ- և հետհայելային փուլ կոտորվում եմ մաս-մաս ինձ զգում եմ մասնատված այնքան մասերի որքան տարանջատված բառ կա այս աշխարհում չէ ինձ անդրադարձնող հայելին է փշրվում երբ Պոեզիան կատաղած շպրտեցի վրան Պոեզիա կփոխարինե՞ք Պոեզիան էլ հետն էր փշրվել ու հիմա հապշտապ իրար եմ կցել կոլաժավորել իրար ինչ քիչ թե շատ պահպանվել էր բունտի հետևանքով երբ հայելու մեջ Աստծո պատկերն ընկավ աչքիս Պոեզիա կարա՞ք Իմ ազգանվան պատմությունը սերում է ամենապոետիկ մոլորակի ամենապոետիկ ցեղասպանություններից մեկից Պոեզիային մինետ կանե՞ք Պոեզիայի տրաֆիկինգ գովազդների միջոցով Պոեզիա կփորե՞ք Պոեզիա կքրտնե՞ք Պոեզիա կջղայնանա՞ք Պոեզիա կքրֆե՞ք Պոեզիա կթունավորե՞ք Պոեզիա կեռացնե՞ք Պոեզիա կմրսե՞ք Պոեզիա կլսե՞ք Պոեզիա կգմփցնե՞ք կպայթըցնե՞ք պոեզիա կտրաքցընե՞ք կտեղադրե՞ք պառլամենտի շենքի տակ Պոեզիա կսպանե՞ք Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ եթե Պոեզիան ձեր մեջ ընկնելով չմեռնի ինքը մինակ կը մնայ բայց եթե մեռնի շատ պտուղ կը բերէ շատ ցասում կը բերէ շատ գժութիւն կը բերէ ինձ շատ հունից կը հանէ ինձ կը կատաղեցնէ ինձ կը պայթեցնէ Պոեզիա ինձ կը փսխեցնէ՛ Պոեզիան տեղ չի թողնում իրեն հակադրվելու Բողոք ընդդեմ Պոեզիայի Աբսուրդ Պոեզիա քունիր թողիր Պոեզիա սիկտի՛ր Պոեզիան ինձ հանգիստ չի թողնում և ես ազատում եմ Պոեզիային իրեն տանջող կլաուստրոֆոբիայից բայց օգուտ չունի Իմ Պոեզիան տառապում է կլաուստրոֆոբիայով ուր էլ լինի նա դուրսը թե ներսը այս բառերի մեջ թե անդին ձեր մեջ թե նրանց մեջ Ամբողջ Արվեստը Արվեստագետի պատկերացումն է մահվան մասին Պոեզիայի տոտալությունը մահ է Պոեզիայի մահ ախր չէ՞ որ որևիցե երևույթի համատարած տոտալությունը ենթադրում է նույն այդ երևույթի ինքնության տարրալուծում անհետ կորուստ և իմ դաժան փորձերը նրան

որևէ կերպ սահմանում տալ հունից հանում են նրան կատաղեցնում ու ես դրանից դրանից փախխխած կայֆ եմ բռնում այդ սադոմազոխիզմից գիտակցելով որ իսկական պոետի խեռը գրավիտացիայի չի ենթարկվում Եղե՛ք Ռեալիստ Պահանջե՛ք Անհնարինը Պահանջե՛ք Պոե՛զիա Ես նույնքան անհնարին եմ որքան Պոեզիան Պոեզիան է ինձ ընտրել և ոչ հակառակը Պոեզիան էլ ինձ գրքի պես կվերջացնի ինձ և դա կլինի Պոեզիայի ինքնասպանությունը Պատանեկան էքստազների մեջ երբ ինձ խենթացնում էր 60-ականներից 90-կանները պատմության ժայթքող մաշկին դաջված Հակաադոռնյան էքստազամետ երաժշտությունն ու Պոեզիա աբորտ կանե՞ք ու պերֆորմանսն ու հէփընինգը մոռացա ինչ-որ սիրածս ու չսիրածս սպեցէֆեկտներն ու հետմահու սեքս թե էսթետիկական կատակլիզմների բուժիչ հատկությունները գիտատեխնիկական նվաճումներ որոնք կստեղծեին ինչ-որ խաբկանքներ ու իբր վերջնականապես կփակեն երիտասարդության հեղափոխական ռեխը խառնվել Աուշվիցից հետո Պոեզիա չգրելը բարբարոսություն է Ե՛րգի խճճվել կորցնել սեփական մազերի հաշիվը Պոեզիային գիշերը հեքիաթ կկարդա՞ք դինոզավրների մասին Պոեզիան կփոխե՞ք հայրենիքի հետ Պոեզիան կփոխե՞ք փողի հետ Այս նույն հարցերը կուղղե՞ք Պոեզիային ձեր անունից Պոեզիան չափման միավոր է որով կարելի է չափել Արտիստի դժբախտության ու ներքին անտագոնիզմի անհաղթահարելի անելանելիության ու անչափ երջանկության ծավալը հետևյալ բանաձևով պոեզիա–պոեզիա = պոեզիա Չվախենալ Պոեզիայից ուրեմն Չվախենալ Մահից Ինչ երևակայելի է այն իրագործելի է Պոեզիա Հենց մարդկությունը ոչնչացնի Պոեզիան մարդկությունը կթևակոխի հավերժ խաղաղության շրջան և այդ ժամանակ նրան պատերազմներ պետք չեն լինի պետք չեն լինի բանակներ ռազմական նավեր մարտական ինքնաթիռներ ու թունավոր նյութեր Այդ ժամանակ մարդկությունն արդեն հավիտյանս հավիտենից չի տեսնի պատերազմ չի տեսնի և սեփական արտացոլքը հայելու մեջ

ԵՍ ԼՌՈՒՄ ԵՄ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԲ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ Է
ԸՆԴԴԵՄ ԽՈՍՔԻ

2002

Սեր ամեն հայացքից

Բոլոր մարդիկ բացի Պոետներից
Աննորմալ են

Մարդկության գերակշիռ մեծամասնությունն աննորմալ է
Հետևաբար նորմալ է այդ աննորմալությունը

Իսկ երբ ես ըմբոստանում եմ այդ համատարած աննորմալության դե՛մ
Ինձ համարում են աննորմալ

Բոլոր Պոետները
Աննորմալ են

Հրաշք կա
Չի կարող չլինել
Եվ դրանում ես համոզված եմ նույնքան
Ինչքան նրանում որ

Եթե քիթդ մի քիչ ավելի ծուռ լիներ
Աշխարհի պատկերն այլ կլիներ
Դու տոն ես

Առաջին Պոեզիան
Ես գրել եմ քայլերովս
Երբ իմ առաջին ուսանողական գիժ սիրահարության ժամանակ
Չափչփում էի քաղաքի փողոցներն ու նրբանցքները
Քայլերիս հետագծերով գրելով իմ սիրելի աղջկա երկար անունը
Թաղամասեր էի կտրում մտապահելով հսկայական տառերի հերթականությունը
Է Վ Ե Լ Ի Ն Ա

Մի քանի շաբաթվա ընթացքում հասցրել էի գրոտել
Հսկայական մեգապոլիսի հատակագիծը
Այնպիսի ձեռագրով
Ավելի շուտ ոտագրով
Որն ինձ կհասցեագրեր ուղիղ հոգեբուժարան
Աննախադեպ դիագնոզով — Լ Ի Ն Ա

Ես երազում էի ղդիկ տալ նրա ամբողջ ջանը
Ես երազում էի բռնաբարել նրա մարմնի բոլոր ծակոտիները
Ես երազում էի կանգնել նրան դեմ դիմաց
Ու քարկապել նրա երկար մազերն իմ երկար մազերին
Մազաչափ արանքներից ներս ընկնող արևի
Ճառագայթների տակ վայելել լռությունը
Ես երազում էի ցույց տալ նրան աշխարհն իմ աչքերում
Ես երազում էի գոնե մեկ անգամ տեսնել նրան ուշ գիշերով
Ու լուսնի փուլերի փոխարեն տեսնում էի
Երկնքում թռչող նրա կտրած եղունգների բեկորները
Ես երազում էի մազերս սանրել նրա մատներով
Նրա ներկոտ ձեռնահետքերով ներկել ավտոս
Ես երազում էի պոկռտել նրա երկար մազերն ու
Տեղադրել էլեկտրական կիթառիս վրա
Ես երազզում էի լինել նրա սիրած եռաչափ երկրաչափական մարմինը
Ես երազում էի ատամներովս դակել նրա ծիծիկն
Ու փիրսինգի պես հևալով քաշ գալ
Նրա ծծերից կախված մետաղի ջարդոնների հետ
Ես երազում էի լինել նրա տանը
Ես երազում էի տեսնել նրան յուրաքանչյուր բացածս դռան հետևում
Ես երազում էի տրուսիկի փոխարեն հագնել նրա հեշտոցը
Ես երազում էի լինել նրա գաղտնաբառերը
Ես երազում էի աշխարհին նայել նրա բլթակների ծակերի միջով
Ես երազում էի դառնալ նրա կյանքի հասանելի բայց անմար երազանքը
Ես երազում էի ծծցնել նրան կայծակնային արագությամբ մեքենավարելիս
Ես երազում էի խաչվել նրա մարմնին
Ու ա՜յդ կերպ հավետ միախառնել մեր արյունները
Ես երազում էի հետևել
Թե ինչպես է նա իր երկար թարթիչներով խոզանակում ատամներս
Ու դառնում էի Պոետ

Գեղեցիկ Աղջիկ
Առ քեզ Գեղեցիկ Տղամարդ Գեղեցկություն Արարող
Թե՞ գեղեցկարար իմ գործունեությունը
Վկայում է հենց քո ամենագեղեցկության անբավարարության մասին

Նա սիրում էր ուրիշի
2 x 2
Շաբլոն պատմություն

Քեզ լքեցին բոլորը՝ քեզնից բացի:

Ինչքա՞ն էի սիրում նրա մարմնաշարժումների հիերոգլիֆները

Խելքը գնում էր լուսնի համար
19 էլ չկար
Շատ մի սենտիմենտալ երազկոտ տիպ էլ չէր
Բայց գիշերները սիրում էր երկա՛ր նայել լուսնին
Ու ես մտքիս դրել էի դառնալ տիեզերագնաց
Որ գոնե լուսնի վրա մի լավ կշտանամ «ինձ» ուղղված նրա հայացքից
Բայց ինձ վիճակված էր բավարարվել
Քար տրաքի օդային ուղևորի կարգավիճակով
Ու լուսնի փոխարեն

Ես թռա Ամերիկա
Կոլոմբոսի օդային հետքերով
Նյու Յորքից տաքսիով սլանալով Նյու Ջերսի
Թռա Ջորջիա նահանգ
Կյանքում առաջին անգամ փող աշխատելու
Տքնաջան աշխատանք
Անքուն գիշերներ
Դեպրեսիաներ
Քունքիս հրացան
Քիմքիս թեքիլա
Գերհոգնածություն
Արտաժամյա ծանր աշխատանքներ
Թունդ պլան
Ոռներիցս ծուխ
Գործատուս յուրաքանչյուր դոլարն ինձ տալիս էր նույն դժվարությամբ
Ինչ պրոստատիտով հիվանդ անդամագլուխը շեռի մեկ կաթիլ
Մերը քունած կապիտալիստներ
Մի քանի ամիս հետո տղեքով ավտո վարձեցինք
Լիքը գարեջուր առանք
Կոխինք Տոյոտայի տուտուզն ու
Պոկվեցինք Ատլանտյան օվկիանոս
Ծովի մակարդակը մեր կոփված մարմիններով բարձրացնելու
Լողափնյա կայֆեր
Լողափնյա վոլեյբոլներ խաղալ չիմացող գեղեցկուհիների հետ
Լողափնյա գույնզգույն բիկինիներն աչքներիս արևային ակնոցների տեղ դրած
Իրենց բիկինիները ման եկող ճվճվացող աղջիկների հետևներից ընկած

Լողափնյա կրակոտ քամակներից
Ոռայրուկ ընդունող ամառային արև

Ավազահատիկներով պատված
Սավաննա քաղաքը լվացող օվկիանոսից թաց-թաց
Ծանոթ-անծանոթ աղջկեքով տղեքով
Մակընթացությամբ քցվեցինք գիշերային ակումբներ
Վրաներիցս թափ էինք տալիս ջրի կաթիլները
Մեր տոքսիկ կայֆի բացականչական նշանները
Շարժվում էինք աղավաղելով դա Վինչիի
«Մարդկային մարմնի համաչափությունների դիագրամը»
Ղժժացինք պարեցինք խմեցինք տժժացինք կոխվեցինք բայց
Ես համբուրվում էի այն գիտակցությամբ որ թքում եմ այդ բերանների մեջ
Mad
Poseidon
ակումբում

Ես մի կերպ ծլկեցի խելացնոր drum&bass-ի ռիթմերի ու պարերի գժանոցից
Ես լավ հարբել էի ու գիշերվա ժամը երեքին
Լուռ ու մենակ կանգնած էի մի քանի կիլոմետրանոց
Իմ պես ճոճվող կախովի կամրջի վրա
Ու պատկերացնում թե ոնց եմ կարոտից խելագարված Լինայի պատվերով
Amazon.com-ի հոգատարությամբ նավով փոխադրվում նրա ծոցը…
ՀԵՏԻՈՏՆԻ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է
Քամուն հակառակ քայլերս տանում էին լուսարձակ
Քաղաքից հեռու դեպի մթություն
Ես գիտեի որ կամրջի մյուս կողմում Հարավային Կարոլինան է
Ես զգում էի ինչպես էր Լինան մյուս կիսագնդում տեղաշարժվում
Երկրագնդի վրայով որ մի կրկեսային գնդակ է
Ու պտտվում է նրա քայլերից
Նրա անհոգ քայլերի հակառակ ուղղությամբ
Որոշել էի Կարոլինայի մոտակա մութ ափում մենակով լողալ
Հատուկենտ հսկայական բեռնատարներ էին մեծ արագությամբ անցնում
Մթությունն առջևում իրոք վախենալու էր
Ու խորհրդավորություն կար այդ անտեսանելիության մեջ
Խմածությունս մնաց հետևում
Այսպես ոտքով գնում էի իմ հարազատ քաղաքի մի ծայրից մյուսը
Դեպի Love Street
Որտեղ բնակվում էր իմ սիրունիկ աղջիկը
Նրա տան պատերն ականջներիս սեղմած

Աշխարհին խուլ փնտրում էի նրա ձայնը կենցաղային շըրըփ-թըրըփը
Գոնե հազը գոնե բխկոցը գոնե զկռտոցը գոնե աղիքային քամիները
Քայլում էի մենակ գիշերվա հազարին աշխարհի
Մյուս ծայրում մի ճոճվող կամրջով
Սիրտս հզոր jabերով վաղուց նոկաուտի էր ենթարկել սառը դատողությունս
Նայեք նրա աչքերի մեջ
Հետո գնում էի ընկերներիցս մեկին դիվադադար անելու
Դուռը ջարդում էնքան մինչև բացեր
Դուրս քաշում քնաթաթախին
Ու ձմեռվա սառնամանիքին ոգևորված պատմում հոգեվիճակիս մասին
Բերանիցս դուրս եկող գոլորշու մեջ տեղադրելով ցնորված մտքեր
Հեռվից դառը տեսարանը զվարճալի մի կոմիքսի էր նման
Ճայ անցավ կամրջի տակով
Կողս դեմ տված քայլում էի դեպի Endless Night
Հասնելու Հարավային Կարոլինա
Իմ անկուշտ սիրո Մեքքան
Որ կրում է բաղձալի անունը
Կ Ա Ր Ո Լ Ի Ն Ա
Իմ առաջին սիրո Պոեմի վերնագիրը
Բաղկացած իմ ու նրա անունների վանկերից

Ու ոտք դրեցի Կարոլինայի հողը թե չէ
Պատահեց անսպասելին
Կարոլինայում
Ես տեսա աղավաղված պատկերներ իմ «Կարոլինա» պոեմից.
«Կաբրիոլետում նա է ու նա. ճանապարհում է նրանց քնկոտ օձը
…դեպի Գրողի ծոցը»
Աչքերիս առաջ մի տեսարան էր բացվել.
Welcome to South Carolina! գրվածքով մեծ ցուցանակի դիմացի մայթին
Վրաերթ արված հաստ ու երկար օձ
Երկարության կեսը սեփական արյան չորացած հունն էր
Քիչ հեռու
Մի քանի տարվա հնության փոշիով պատված կաբրիոլետ իջած ակերով

Երկար նայում էի
Սառը քրտնքի միջով
Մոլի աթեիստի դեֆոկուսացած տեսադաշտում
Ուրվագծվում էր ԱՍՏՎԱԾ
Ու դառնում էի պոետ

Հետդարձի ճանապարհի մի մասն անցա հետևանց
Տեսարանը փոքրանում էր վառվող թղթի պես
Իր ստվերի հետ ծանոթացող փոքրիկ փիսիկի պես
Ես վերստին ծանոթանում էի ինքս ինձ հետ

Ինձ մինչ այդ թվում էր թե ինձ համար
Պոեզիան ոչ այլ ինչ է քան սերս արտահայտելու մի միջոց
Բայց հիմա արդեն պարզ գիտակցում էի որ
Ինձ համար
Սերը ոչ այլ ինչ է քան
Պոեզիա արտահայտելու հազարավոր միջոցներից մեկը
Ու դառնում պոետ
Որը ձայնն աշխարհը գցած հայտարարում է

Մարդու մեջ գնահատելի է մենակ Պոեզիան
Մնացած որակները փուչ բաներ են

Սիրահարությունը մարդասիրության մայրն է

Ես սիրում եմ քեզ

Արևելքն ու արևմուտքը շարունակ վոլեյբոլ էին խաղում
Արևով մի քանի տասնյակ նետում հասցրին փոխանակել
Մինչ հոգնած ջարդված կհասնեի Ամերիկայից տուն

Ինչպես օձի խայթոցից դեղ
Նրա անտարբերությունից Պոեզիա քամելու

2004

House Sweet House

Մի կանգնի
Գնա
Մի կանգնի
Գնա
Չէ չէ չէ չէ
Մի կանգնի
Մի կանգնի
Գնա
Չկանգնես
Գնա
Գնա
Չտշես գարեջրի դատարկ բանկեն
Մեկ էլ տեսար հեծանիվիս ակի տակ ընկավ
Ու ես շուռ եկա
Բայց մի կանգնի
Գնա
Մի կանգնի
Չսպասես
Գնա
Տշի գարեջրի դատարկ բանկեն
Մեկ էլ տեսար հեծանիվիս ակի տակ ընկավ
Ու ես շուռ եկա
Բանի տեղ չդնես
Գնա
Մի կանգնի
Գնա
Մազերդ մի դզի
Գնա
Քրոմատիկ գամմա
Գնա
Տարբեր տեղեր միաժամանակ
Գնա
Չկանգնես
Գնա
Գնա
Քշի
Արագ

Քշի
Մի կանգնի
Արագությունը մի փոխի
Քշի
Մի սպասի
Գնա
Արագ
Քշի
Արագ
Պատուհանները բաց արա
Քշի
Արագ
Պատուհաններն էլի բաց արա
Արագ
Պատուհանները բաց պահի
Քշի
Արագացրու
Արագացրու
Արագացրու
Քշի
Երաժշտությունից արագ
Արագ
Ճղի օդը
Ճանապարհները հեռվից են նեղ թվում
Քշի
Արագ
Հեռացի
Մոտեցի
Ճանապարհները հեռվից են նեղ թվում
Տար քեզ
Տար քեզ ինքդ
Ճանապարհները հեռու մենակ նեղ թվացյալ
Քշի
Տարբեր ուղղություններով միաժամանակ
Տարբեր ուղղություններով միաժամանակ
Արագ
Արագ
Տարբեր ուղղություններով միաժամանակ
Արագացրու
Որ ամեն ինչ գիծ դառնա

Քշի
Արագացրու
Որ ամեն ինչ գիծ դառնա
Արագ
Արագ
Գծերից լավ բան չկա
Արագ
Քշի
Գծերից էլ արագ
Արագ
Քշի
Որ ամեն ինչ
Արագ
Որ ամեն ինչ
Գծեր
Արագ
Գծերն ուղղություն չունեն
Ամեն ինչ գիծ դառավ
Ուղղությունները վերացան
Ուրիշ ձև քշի
Քշի բայց ուրիշ ձև
Ինչ են ասո՞ւմ
Քշի
Արագ
Ուր ուզես
Գծերն ուղղություն չունեն
Գիտե՞ս ուր ես հասել
Ձեռնափերիդ մեջ նայի
Կանգնել չկա
Արագ
Ձեռնափերիդ գծերով ես քշում
Ժամական ավելի շատ ցանկություն է ծնվում
Քան մարդ
Ժամական ավելի շատ ցանկություն է մեռնում
Քան մարդ
Ցանկությունները թիթեռներ են
Որ առաջանում են կասկածի թրթուրից
Հետո պատռում կամքի կուռ բոժոժը
Որ փարատեն ժամանակավորապես
Մեր կասկածները հավիտենական

Չկանգնես
Մատներդ տար երակներիդ
Մատներդ
Թռցրու
Հեռու
Հեռու դեպի երակներդ
Քշի երակներիդ դելտայի ուղղությամբ
Գծերն ուղղություն չունեն
Գծեր
Կտեսնես
Մատներդ
Դիր
Պուլսիդ
Դիր
Ու զգա
Զգա
Էլի
Զգա
Չափից շատ զգալ չկա
Ոչ էլ չափ կա
Դիր
Մատներդ
Երակներիդ
Ու դու կիմանաս
Որ գոնե մեկ սիրտ կա որ քո համար է բաբախում
Դու շարժվում ես
Դու անոթազարկիդ երաժշտության էքվալայզերն ես
Ես շարժվում եմ
Մենք գծեր ենք
Լուռ պարենք մեր անոթազարկերի երաժշտության տակ
Դու գիծ ես
Նա գիծ է
Ես գիժ եմ
Բոլորն են գիժ
Կայֆ ա չէ՞
Գժեր
Կանգնել չկա
Սկիզբ չունի
Գիծը
Վերջ չունի

Քշի
Արագ
Կանգնել չկա
Մեզ բացառություններ են պետք
Օդի ու ջրի պես
Առանց կանգ առնելու
Գնա
Անդադար
Արգելակը չսեղմես
Հավեսս տվեց
Փորձեմ
Արգելքները հանեմ մի վայրկյանով
Քո ազատությունը չի վերջանում այնտեղ
Որտեղ իմն է սկսվում
Էս
Ի՞նչ
Կայֆ
Էր
Մի
Հատ
Էլ
Իմ ազատությունը չի վերջանում այնտեղ
Որտեղ քոնն է սկսվում
Ի՞նչ դզել էր
Դզեց
Ուղղությունները վերացել են
Արագ
Ընթաց
Գնա
Ո՞ւր
Քշի
Արա՞գ
Բոլոր ուղղություններով միաժամանակ
Գնա
Չթուլացնես
Մի փորձի բացատրել
Ու ամեն ինչ պարզ կդառնա
Հեշտ
Ու պարզ
Պարզապես մի բացատրի

Քնացրու բացատրություններդ
Թող մի քիչ հանգստանան
Մեզ բացառություններ են պետք հիմա
Ոչ թե բացատրություններ
Սուրա
Չկանգնես
Մենք բարդացնում ենք ամեն ինչ
Որ մեր լուծումները մեզ պատիվ բերեն
Մի բացատրի
Ու պարզ կլինի
Պարզից պարզ
Ինչպես կարմրի տակով
Անցնող կանաչ մեքենան
Մենք դեռ կտեսնվենք
Բոլոր գծերը վաղ թե ուշ հատվում են

2005

Տիեզերք

Միշտ ուզեցել եմ ներթափանցել մարդկանց
Բոլոր հնարավոր եղանակներով

Մինչ առնանդամս տարեց տարի բոյ էր քաշում
Իսկ գիրս ճեղքում դպրոցական հանձնարարությունների սահմանները
Ներթափանցման եղանակների հանրագումարը նեղացրի երկուսի
Մտավոր և մտնավոր

Ներթափանցման այդ երկու հույժ տարբեր եղանակների գործիքներն են
Գրիչն ու գրգռիչը համապատասխանաբար

Ինչ վերաբերում է գրչաներթափանցմանը
Իմ ստեղծագործությունների Ձեր ընթերցումը
Իրականում իմ մտավոր թափանցումն է Ձեր մեջ
Իսկ անընդհատ մի տողի վերջից մյուս տողի սկիզբն անցնելիս
Դուք գործի եք դնում հրոցը
Եվ ամեն անգամ
Ձեր ընթերցումն ավարտելիս
Կարող եք միայն պատկերացնել
Թե
Ինչպես
Եմ
Թա
Վալ
Վում
Մտավոր
Օրգազմի
Մեջ

Իսկ ինչ վերաբերում է ֆալիկ ներթափանցմանը

Ես հավեսով խառնում եմ ուրցով թեյս ու աչքերով հետևում
Պուցդ դեպի ինքն իրեն ուղղված սլաք է
Պուցդ ասես եգիպտական բուրգ լինի գլխնիվայր շրջված
Պուցդ ասես Volkswagen-ի տարբերանշանը լինի
Ձնայած եռանկյունաձև է պուցդ
Քառակուսին է իմ կրքի

Գոլորշուց հոտ եմ քաշում փակ աչքերով որ կարոտեմ
Մաշված բազկաթոռիս փռված մարմինդ
Պուցդ ասես գահ լինի առանց արքայի
Պուցդ ասես ամպերի հետևում թաքնված արև լինի
Պուցդ ասես մարիխուանայի համար պարարտ հող լինի
Պուցդ երբեմն ասես անթրաշ թևատակ լինի
Պուցդ ասես ոչխարի շրթունք լինի Ուիթմենի խոտի տերևներն արածելիս
Պուցդ երբեմն ասես սափրած գառնուկ լինի
Պուցդ ասես չեշիրյան կատվի ժպիտը լինի
Որ սփոփվում է անդամահատվելու անհնարինությամբ

Մի կում եմ անում
Պուցդ ասես շուրթերիդ արանքում ապաստանած լեզվիս եզրը լինի
Պուցդ ասես ազդրերիդ արանքում քնի անցած մի թիթեռ լինի
Խոսքիս բասային ելևէջների ալիքներից
Թրթռում են նրա թևերը բարձրախոսների պես
Ինձ տարավ նրբին թնդյունն ու դրնդյունը
Քեզ տարավ գունավոր թեևերի հազիվ հպումը
Պուցդ ասես ծիրան լինի խոր ակոսով
Պուցդ ասես մատներիս միջև ընկած տարածությունը լինի
Որին մատների արանքով նայել չի լինի
Պուցդ այն տաշած քարն է որ գետնին ընկած չի մնա

Գլուխս խոնարհած սիգարետ եմ փաթաթում
Ու արդեն կարոտում եմ հյուծիչ կենակցումից հետո
Քնի անցածիդ պատկերը
Պուցդ լուռ ու տևական ծափահարություն է
Պուցդ բերմուդյան եռանկյունու պես մի բան է
Պուցդ ասես Հռոմը լինի
Ուր ժամանակին տանում էին բոլոր ճանապարհները
Պուցդ ասես զրո լինի
Որտեղից հավետ սկիզբ են առնում բոլոր թվերը
Պուցդ ասես քվեատուփ լինի
Որը չեմ լցոնում հօգուտ սեփական թեկնածության
Բայց ամեն անգամ վերընտրվում եմ
Տնքոցների բացարձակ մեծամասնությամբ

Մի մուխ քաշեցի
Ծուխն ու գոլորշին միաձուլվեցին

Ինչպես մեր մարմինները կես ժամ առաջ
Պուցդ առնանդամիս սիրած լոգարանն է
Արքիմեդն Է՛վրիկա ճչացել է
Հավանաբար քոնի պես հյութալի
Քոնի պես հեշտածուփ մի պցի մեջ ընկղմվելիս
Պուցդ ասես թշիդ փոսիկը լինի
Ժպտալիս
Երբ նայում եմ պորտիդ պուճուրիկ կետին
Պուցդ վերածվում է բացականչական նշանի
Պուցդ հոծ գիծ է երկզոլ
Որը հատելով հանդիպակաց գոտի ես դուրս գալիս
Ու բախվում
Հետադարձ կատարում
Ու էլ ավելի ուժեղ բախվում

Ինձ մի քթանցք էլ կավելացնեի
Ուրցով թեյի բուրմունքը վայելելու համար
Եվս մի թոք թութունը վայելելու համար
Ու էլի մի աչք գեղեցկությամբդ հիանալու համար
Պուցդ օազիս է այս մեռյալ երկրում
Պուցդ ասես մեծ վախից կոլոլված ճստլիկ ոզնի լինի
Պուցդ ասես Հիտլերի բեղը լինի
Նայած օր նայած տրամադրություն
Պուցդ ասես կրկնակի համբուրգեր լինի
Հացափերի արանքը ճխտված մսի զույգ սալիկներով
Պուցդ ասես ճագարի բույն լինի
Ահա թե որտեղ է աշխարհը հրաշքների
Պուցդ դնչիկիդ այդ պաշտելի փոսիկի ընդհատված շարունակությունն է
Ճակատիս երկարաձիգ սպին պցիդ դիմաքանդակն է
Որ քանդակել եմ երեք տարեկանում
Լաքապատ հատակի վրա սայթաքելով ու լոշվելով
Պուցդ ասես որոգայթ լինի վարդի թերթիկներով ծածկված

Ինչքան կուզեի ուրիշ ոչինչ չուզել
Պուցդ աղոթքի նպատակով իրար միացած ձեռքերի է նման
Պուցդ ասես Եդեմ լինի
Որտեղից վտարվել եմ
Եթե պուցդ Մեքքա լիներ
Ես մահմեդականություն կընդունեի

Կասկած չունեմ որ թեժ պցիցդ սիգարետս կկպներ
Բայց թողնենք մյուս անգամվան
Պուցդ ասես բանկի հաշվեհամար լինի
Որտեղ ավանդում եմ գանձերիցս լավագույնները
Պուցդ ասես ամերիկյան մաքսատուն լինի
Որն ինձ ստիպում է ոտից գլուխ մերկանալ
Մինչև աշխարհդ ներթափանցելն արտոնելը
Քո դաշտանը Կարմիր ծովն է
Որի ալիքները Մովսեսի պես բաժանելով
Սերմերս եմ անհամբեր անցկացնում դեպի Ավետյաց երկիր

Կուլ տվեցի հովացած թեյս
Ու դու զարթնեցիր իմ բխկոցից
Պուցդ քո այլընտրանքային բերանն է
Մի տարօրինակ որոճող գիշատիչ
Որն ինձ կշտացնում է ինձ իսկ հոշոտելով
Պուցդ ասես Վիոլետի բանաստեղծությունների ծաղկաքաղը լինի
Որոնք միկրոարվեստագետ Էդուարդը Ղազարյանը
Տառ առ տառ արտագրել է շրջակա փռչերիդ վրա

Ես բացեցի սառցարանի դռնակը
Պուցդ վաֆլու կոն է
Որի մեջ պաղպաղակի գնդեր եմ ճխտում
Բերնեբերան
Լզում եմ արդեն
Պուցդ կարծես թոսթեր լինի
Որի միջից դուրս է ցատկում վառվող լեզուս
Պուցդ ասես սիգարետի տուփ լինի
Երբ առնանդամս միջից հանում
Դնում ես զով բերանիդ մեջ

Կինն առանց տղամարդու նույնն է
Ինչ ձուկն առանց հեծանիվի
Կեցցե՛ անկախությունդ հոգիս
Բայց ձուկն այդ ես եմ ախր
Ու դու ջուր հոգիս
Առանց ջուր ձուկը մեռանի
Ու քեզ գրկեցի
Մարմինդ խոպոպվեց իբրև ծովախեցի
Ականջիս մոտեցրի պուցդ

Ու ջրերդ լպստեցին ականջախեցիս
Ըմմմմմ ի՜նչ տիեզերական մեղեդի

Տիեզերքում ամեն ինչ քո պցի ու իմ կլրի
Ու դրանց գործառույթների աղքատիկ կապկումն է
Պուցդ ասես էլ. փոստարկղ լինի
Որը լեփ-լեցուն է չկարդացված օրգազմներով
Ես գիտեմ գաղտնաբառը

Խնդրեցիր որ պահպանակ հագնեմ
Պուցդ *Է՛* պահպանակ ապահովագույն
Թող որ հագնեմ քեզ ու քունած ունենանք տիեզերքը համայն

2006